ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2013 թվականի թիվ 74- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Ներքին աուդիտի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ ենթակետերով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012թ. հունիսի 21-ի <Հայաստանի հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին> թիվ 52-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 3-րդ մասի 2-րդ կետում <Աշխատակազմի ղեկավարը> բառերը փոխարինել <Մարզպետը> բառով.

2) Հավելվածի 5-րդ մասի 7-րդ կետից հանել <և վերահսկում> բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հունիսի 17
ք.Իջևան